

## ԿԱՐԾԻՔ

Սիրանուշ Էդուարդի Ղազարյանի՝ «Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը անգլերենի ուսուցման ընթացքում» թեմայով  
ԺԳ.00.02 – Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (անգլերեն լեզու)  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից աշխարհում բազմալեզու հմտությունները դարձել են անհրաժեշտություն՝ պայմանավորված համաշխարհային շուկայի պահանջներով, միջազգային հաղորդակցության ինտենսիվացմամբ և աշխատանքային նոր հնարավորություններով: Հատկապես հեռավար աշխատանքի և ազատ տեղաշարժի պայմաններում մեկից ավելի օտար լեզուների իմացությունը դարձել է մասնագիտական հաջողության կարևոր նախապայման: Այս համատեքստում մի քանի օտար լեզուների իմացությունը դարձել է առաջնային անհրաժեշտություն: Կարևորվում են նաև անձի փափուկ հմտությունները, իսկ բազմալեզու հաղորդակցման ունակությունը դարձել է ժամանակի հրամայական: Բուհերում աճում է դասավանդվող օտար լեզուների քանակը, մինչդեռ ուսումնառության գործընթացում հաճախ չեն կարևորվում լեզուների միջև առկա կապերը:

Սիրանուշ Ղազարյանը իրավացիորեն գտնում է, որ երրորդ և հաջորդող օտար լեզուների դասավանդումը պահանջում է տարբեր մոտեցումներ՝ հաշվի առնելով ուսանողների առկա լեզվական գիտելիքները, հաղորդակցական և սոցիալական հմտությունները: Ըստ ատենախոսի՝ բազմալեզու ուսանողը պետք է կարողանա օգտվել այլ լեզուների և մշակույթների վերաբերյալ գիտելիքներից, կարողություններից, հմտություններից, անհրաժեշտության դեպքում կատարի մի լեզվից մյուսը փոխադրում, դրսևորի ինդուկտիվ և դեդուկտիվ մտածողություն՝ ուսումնառության գործընթացը հեշտացնելու նպատակով:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝

- Բազմալեզու կարողունակությունների զարգացման ժամանակակից պահանջով, որը կարող է իրականացվել համապատասխան ռազմավարության մշակմամբ,
- ՀՀ-ում այս ոլորտում հիմնարար հետազոտությունների բացակայությամբ:

Ատենախոսն իր առջև հստակ խնդիրներ է դրել և լուծել է հետազոտության ընթացքում: Նա ուսումնասիրել է ՀՀ բուհերում անգլերենի դասավանդման փորձը, որտեղ սովորում են հայերենին (մայրենի), ռուսերենին (առաջին օտար լեզու) և ֆրանսերենին (երկրորդ օտար լեզու) տիրապետող ուսանողներ: ՀՀ դպրոցներում երկրորդ օտար լեզուն սովորաբար անգլերենն է, իսկ ֆրանսերեն կամ գերմաներեն սովորած աշակերտները բուհում հաճախ ընտրում են անգլերենը որպես երրորդ օտար լեզու: Ատենախոսն իր հսկայածավալ հետազոտության ընթացքում շեշտադրում է այն փաստը, որ ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացումը պետք է ընթանա բազմամշակութային կարողունակությունների զարգացմանը զուգահեռ և հիմնվի ճանաչողական-հաղորդակցական մոտեցման վրա:

Հետազոտությունը հիմնվել է ոլորտի հիմնարար ուսումնասիրությունների և Եվրախորհրդի լեզվակրթական փաստաթղթերի վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ատենախոսը հանգամանորեն հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպել հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության նախնական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, խնդիրները: Բավականին լավ է ներկայացված հետազոտության նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտությունն ուսումնասիրում է բուհական միջավայրում անգլերենի՝ որպես երրորդ օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները: Կարևորվում է բազմալեզու և բազմամշակութային կարողունակությունների զուգահեռ զարգացումը՝ հիմնված ճանաչողական-հաղորդակցական մոտեցման վրա:

Ատենախոսության առաջին՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման առանձնահատկությունները»**, գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման տեսական դրույթները ժամանակակից լեզվակրթության համատեքստում»**, գլխի առաջին ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բազմալեզվության հիմնական հասկացությունները և դրանց կիրառումը կրթության մեջ, վերլուծում տարբեր հեղինակների մոտեցումները միջլեզվային փոխազդեցությունների և օտար լեզուների ուսուցման վերաբերյալ: Հանգամանորեն բացատրվում են հիմնական եզրույթները՝ ներառյալ կարողունակություն, լեզվական և հաղորդակցական կարողունակություններ, բազմակարողունակություն և միջլեզու: Նկարագրվում են բազմալեզվության երեք հիմնական դրսևորումները՝ հետընթաց, հետընթաց-առաջընթաց և առաջընթաց:

Երկրորդ՝ **«Երրորդ օտար լեզվի ուսուցման առանձնահատկությունները»**, ենթագլխում քննարկվում են երրորդ օտար լեզվի ուսուցման հիմնական բաղադրիչները՝ հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը, լեզվագիտակցությունը և նախնական գիտելիքների դերը երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում: Կարևորվում է ուսանողների վերլեզվական, վերճանաչողական և սոցիալական հմտությունների զարգացումը, ինչպես նաև ինքնուրույն ուսումնառության խթանումը: Առաջարկվում է կիրառել Ուսումնական համընդհանուր գործողություններ (ՈՒՀԳ)՝ ուսուցման գործընթացն արդյունավետ դարձնելու համար:

Երրորդ՝ **«Միջլեզվային փոխազդեցությունները երրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացում»**, ենթագլխում վերլուծվում են միջլեզվային փոխազդեցությունները և դրանց վրա ազդող գործոնները՝ լեզուների տիպաբանական նմանությունը, կարգավիճակը և ուսումնառության եղանակը: Ներկայացվում է Բարիշնիկովի «մատրյոշկայի» տեսությունը, որտեղ մայրենի լեզուն հանդես է գալիս որպես հիմք մյուս լեզուների յուրացման համար:

Քննարկվում են լեզուների միջև ներակա և արտակա համեմատությունները՝ բերելով օրինակներ հայերենից, ռուսերենից, ֆրանսերենից և անգլերենից: Առաջարկվող ուսուցման մեթոդները նպատակաուղղված են ոչ միայն լեզվական, այլ նաև վերլուծական, քննադատական և ճանաչողական հմտությունների զարգացմանը:

Երկրորդ՝ **«Բազմալեզու կարողունակությունների զարգացման ազդավարությունը»**, գլխի առաջին՝ **«Ուսանողների բազմալեզու**

**կարողունակությունների զարգացման ռազմավարության մոդելը»,** ենթազլխում ատենախոսը ներկայացնում է բազմալեզու կարողունակությունների զարգացման քառամակարդակ մոդելը:

Մակարդակ 1. Ռազմավարությունների երկու հիմնական խումբ՝

- Լեզվահաղորդակցական կարողությունների խթանում,
- Ինքնաբացահայտման և փոխգործակցության ակտիվացում:

Մակարդակ 2. Ինը հիմնական ռազմավարություն՝

- Լեզվահաղորդակցական խմբում՝ ըմբռնման, մտապահման, վերլեզվական, փոխադրման և փոխհատուցման,
- Ինքնաբացահայտման խմբում՝ ճանաչողական, վերճանաչողական, հուզական և սոցիալական:

Մակարդակներ 3-4. Յուրաքանչյուր ռազմավարության համար սահմանված մեթոդներ և համապատասխան առաջադրանքներ:

Ատենախոսը մանրամասնորեն նկարագրում է յուրաքանչյուր ռազմավարություն՝ ներառելով նպատակը, կիրառվող մեթոդները, առաջադրանքների տեսակները, դիդակտիկ նյութերը և թվային գործիքները՝ ուսանողների բազմալեզու կարողունակությունների արդյունավետ զարգացման համար:

Երկրորդ՝ **«Ռազմավարության մոդելի արդյունավետության փորձարկման նախապատրաստում»,** ենթազլխում նկարագրվում են գիտափորձի նախապատրաստական աշխատանքներն ու իրականացման փուլերը՝ նախնական մշտադիտարկումը, հայտորոշիչ թեստավորումը, փորձարարական ուսուցումը, հետփորձարարական թեստավորումը և անկետավորումը:

Գիտափորձն իրականացվել է A2+ մակարդակի բազմալեզու ուսանողների հետ: Թիրախային խմբում ընդգրկված 236 մասնակիցները ներկայացրել են ՀՀ բուհերից 116, իսկ արտերկրի բուհերից 120 ուսանողներ:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ուսանողների մոտ բավարար զարգացած չեն բազմալեզու լեզվամշակութային, հաղորդակցական, վերլեզվական, ճանաչողական և փոխհատուցման կարողությունները:

Երրորդ՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացմանն ուղղված փորձարարական ուսուցում և արդյունքների վերլուծություն»**, ենթազխում նկարագրվում է փորձարարական ուսուցումը, որն իրականացվել է ՀՀ-ում (մեկ կիսամյակ) և արտերկրում (մեկ ամիս), ինչպես նաև արդյունքների վերլուծությունը: Գիտափորձի թիրախային խումբը բաղկացած էր անգլերենը՝ որպես օտար լեզու ուսումնասիրող բազմալեզու ուսանողներից, ովքեր տիրապետում են նաև ֆրանսերենին և ռուսերենին: Փորձարարական ուսուցման նպատակն էր գնահատել ռազմավարության մոդելի արդյունավետությունը, միջլեզվային սխալների շտկման մակարդակը և բազմալեզու կարողունակությունների զարգացումը:

Ուսուցման ավարտին իրականացված թեստավորման արդյունքում համեմատվել են ստուգողական և փորձարարական խմբերի արդյունքները, որտեղ ակնհայտ է ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման դրական դինամիկան: Հետփորձարարական անկետավորման և թեստավորման արդյունքները հաստատել են առաջադրված գիտական վարկածը՝ ապացուցելով ռազմավարության արդյունավետությունը:

Հետազոտության եզրակացություններն արտացոլում են նրա առաջադիր խնդիրները, ամբողջական են, տրամաբանորեն փոխկապակցված: Հետազոտության ընթացքում օգտագործած գրականությունն արդիական է: Սեղմագիրը և հոդվածներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Ուշադրության է արժանի ատենախոսի կողմից մշակված թե՛ արտադրողական և թե՛ ընկալողական առաջադրանքների շարքը:

Բոլոր գլուխները և ենթագլուխները տրամաբանորեն ճիշտ են կառուցված:

Ինչ վերաբերում է թերացումներին և վրիպումներին, ապա կարող ենք նշել հետևյալը.

1. Երկրորդ գլխի երրորդ՝ **«Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացմանն ուղղված փորձարարական ուսուցում և արդյունքների վերլուծություն»** ենթազխում՝ էջ 132-139, ատենախոսության հիմնախնդրի շուրջ ատենախոսը մշակել և ներկայացրել է բազմաթիվ ռազմավարություններ՝ համապատասխան մեթոդների և առաջադրանքների կիրառմամբ:



Այնուամենայնիվ, որո՞նք են ամենաարդյունավետ միջոցները և ո՞ր ռազմավարության կիրառման արդյունքում ուսանողները ձեռք կբերեն գիտելիք, կարողություն, փորձառություն:

2. Հետազոտության արդիականությունը հիմնավորելիս ատենախոսը գրում է «Այսպիսով, հետազոտության արդիականությունը պայմանավորված է ՀՀ բուհերում ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման անհրաժեշտությամբ»: Նա պետք է հստակ նշեր, թե ինչ բուհի նկատի ունի՝ լեզվական, թե ոչ լեզվական:
3. Նույն արդիականության հիմնավորման հատվածում ատենախոսը խոսում է հայ ուսանողների մասին, չնայած նա պետք է խոսի հայախոս ուսանողների մասին:
4. Ընդհանուր առմամբ, ատենախոսության մեջ կարելի է նշել ոճական բնույթի որոշ վրիպումներ:

Այսպիսով, կարելի է վստահորեն պնդել, որ Սիրանուշ Էդուարդի Ղազարյանի «Ուսանողների բազմալեզու կարողունակությունների զարգացման ռազմավարությունը անգլերենի ուսուցման ընթացքում» ատենախոսությունը ամբողջական, լեզվական և գիտական բարձր մակարդակով իրականացված հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի /ԺԳ.00.02 թվանիշով/ գիտական աստիճանին ներկայացվող ժամանակակից պահանջներին, միջնորդում են ՀՊՄՀ-ում գործող՝ ԲԿԳԿ-ի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առջև նրա հեղինակին շնորհելու իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս,  
մանկ., գիտ. թեկնածու, դոցենտ

Ս. Խ. Բաղդասարյան

Ս. Խ. Բաղդասարյանի ստորագրությունը

Հաստատում են՝ ՀՊՄՀ-ի գիտ. քարտուղար

Ս. Մ. Իսպիրյան

13.01.2025թ.

